*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*22 մայիսի 2004 թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 մայիսի 2004 թվականի N 692-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ԵՎ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
***(Վերնագիրը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության առաջնությունների և մարզային առաջնությունների Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարերի և ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումների մասնակիցների գիշերավարձի ու սննդի օրական վճարման չափերը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) ազգային հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների մասնակիցների գիշերավարձի և սննդի օրական վճարման չափերը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) Հայաստանի Հանրապետության առաջնությունների և մարզային առաջնությունների մրցանակակիրների և նրանց մարզիչների պարգևատրման չափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

***(1-ին կետը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2005 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2004 թ. մայիսի 18
Երևան

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2004 թվականի**
**մայիսի 13-ի N 692-Ն որոշման**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ**
***(Վերնագիրը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

***Սննդի օրական վճարման չափը***

(դրամ)

| | ՀՀ առաջնություններ, ՀՀ տարածքում ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարեր | Մարզային առաջնություններ, ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումներ |
|---|---|---|
| Մեծահասակներ | 2500 | 1500 |
| Երիտասարդներ, պատանիներ | 2000 | 1200 |
| Այլ մասնակիցներ (մրցավարներ, բժիշկներ) | 2000 | 1200 |

***Գիշերավարձի վճարման չափը***

(դրամ)

| | Երևան քաղաքում | Մարզերում |
|---|---|---|
| Ծախսերը հաստատող համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում | մինչև 4000 | 2000 |
| Ծախսերը չհաստատող համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում | 2000 | 1300 |

***(Հավելվածը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2004 թվականի**
**մայիսի 13-ի N 692-Ն որոշման**

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ԵՎ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ

(դրամ)

| NN ը/կ | Կազմակերպության անվանումը | Մեկ մասնակցի կեցության վճարի չափը |
|---|---|---|
| 1. | «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՊՓԲԸ | 9800 |
| 2. | «Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՊՓԲԸ | 9800 |
| 3. | «Էրեբունի-Տուրիստ» ՍՊԸ | 8000 |
| 4. | «ԱՅԳ» սպորտային համալիր» ՍՊԸ | 12800 |
| 5. | «Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ | 8000 |
| 6. | «Կուրորտաբանական և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | 14000 |
| 7. | Այլ առողջարաններ և մարզահամալիրներ | մինչև 9800 |

***(Հավելվածը փոփ. 12.10.06 N 1426-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**

**Հավելված N 3**
**ՀՀ կառավարության 2004 թվականի**
**մայիսի 13-ի N 692-Ն որոշման**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ**

***(Վերնագիրը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

(հազ. դրամ)

| Մարզաձևերի պայմանական խմբերը | I տեղ | II տեղ | III տեղ |
|---|---|---|---|
| Առաջին խումբ (մեծահասակներ)<br><br>(ծանրամարտ, ազատ ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ձյուդո, շախմատ, բռնցքամարտ, ՀՀ տարածքում ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի կողմից կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարեր) | | | |
| Մարզիկներ | 30,0 | 20,0 | 15,0 |
| Հաղթողի մարզիչին | 20,0 | | |
| Երկրորդ խումբ (մեծահասակներ)<br><br>(աթլետիկա, մարմնամարզություն, ջրացատկ, սեղանի թենիս, սամբո, սուսերամարտ, թաեքվոնդո, հրաձգություն) | | | |
| Մարզիկներ | 20,0 | 15,0 | 10,0 |
| Հաղթողի մարզիչին | 15,0 | | |
| Երրորդ խումբ (մեծահասակներ)<br><br>(ձիասպորտ, ջրագնդակ, բադմինտոն, հանդբոլ, մականախաղ, գեղասահք, վոլեյբոլ, գեղարվեստական մարմնամարզություն, լող, հեծանվային սպորտ, նետաձգություն, թենիս, ակրոբատիկա, թիավարություն, առագաստանավային սպորտ, դահուկավազք, լեռնադահուկ, բիաթլոն, շաշկի, գեղալող, կոխ, կանոէ, բասկետբոլ, ֆիզկուլտուրային-առողջարարական մասսայական միջոցառումներ) | | | |
| Մարզիկներ | 10,0 | 7,0 | 5,0 |
| Հաղթողի մարզիչին | 5,0 | | |

Հանրապետության երիտասարդների առաջնությունների ժամանակ կիրառվում է սույն որոշման N 3 հավելվածում նշված պարգևատրումների 50 տոկոսի չափը:

***(Հավելվածը լրաց. 11.08.05 N 1220-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**